«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 10

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հրավիրում

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ տնօրենների խորհուրդը 2010 թ. մարտի 11-ի նիստում որոշել է հրավիրել ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով:

Ստորև՝ տնօրենների խորհրդի ընդունած որոշումները (նիստի արձանագրությունը կազմվել է 16.03.2010թ.-ին):

Վ. Բեգլարյան **տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն** _____ (ստորագրություն)

17.03. 2010թ.

Կ.Տ.

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

թիվ 01

ք. Ստեփանակերտ 11 մարտի 2010թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. 2010 թվականի ապրիլի 27-ին, ժամը 11:00-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Թումանյան 63. հասցեում գումարել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:
2. Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովին մասնակցելու նպատակով բաժնետերերի գրանցումը սկսել 2010 թվականի ապրիլի 27-ին, ժամը 10:00-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Թումանյան 63 հասցեում:

3. Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել 2010 թվականի մարտի 12-ի դրությամբ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

4. Հաստատել Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի օրակարգը՝ ընգրկելով հետևյալ հարցերը.

   1) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետերերի ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի ընտրության մասին հարցը,
   2) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի անդամների ընտրության մասին հարցը,
   3) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի վերստուգող հանձնաժողովի ընտրության մասին հարցը,
   4) «ՍՈՍ Աուդիտ» ՍՊԸ-ին որպես 2010 թվականի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձ հաստատելու մասին հարցը,
   5) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2009 թվականի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատման մասին հարցը,
   6) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2009 թվականի գործունեության արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման և տարեկան շահութաբաժինների չափի հաստատման մասին հարցը,
   7) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին հարցը,
   8) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին կանոնակարգը հաստատելու մասին հարցը,
   9) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի մասին կանոնակարգը հաստատելու մասին հարցը,
   10) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի վերստուգող հանձնաժողովի մասին կանոնակարգը հաստատելու մասին հարցը,
   11) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետերերի ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին կանոնակարգը հաստատելու մասին հարցը,
   12) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի շահութաբաժնային քաղաքականության մասին կանոնակարգը հաստատելու մասին հարցը:

5. Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցել էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ծանուցումը տրամադրել առձեռն կամ փոստով:

6. Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի վերաբերյալ հրապարակել կամ բաժնետերերին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

   1) Բաժնետերերի ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի անդամների թեկնածուների ցանկը՝ ներառյալ նրանց մասին տեղեկությունները (հավելված 1),
   2) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի անդամների թեկնածուների ցանկը՝ ներառյալ թեկնածուների մասին, ինչպես նաև թեկնածուների գրավոր համաձայնության առկայության (բացակայության) մասին տեղեկությունները (հավելված 2):
   3) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի վերստուգող հանձնաժողովի անդամների թեկնածուների ցանկը՝ ներառյալ նրանց մասին տեղեկությունները (հավելված 3),
   4) «ՍՈՍ Աուդիտ» ՓԲԸ-ի մասին տեղեկանք (հավելված 4),
   5) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2009 թվականի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունները, այդ թվում՝ հաշվապահական հաշվեկշիռը, շահույթների և վնասների բաշխման հաշվետվությունը (հավելված 5),

6) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2009 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով՝ Խորհրդի կողմից առաջարկվող տարեկան շահութաբաժինների վճարման կարգի և չափի մասին տեղեկանքը (հավելված 6),
7) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի նոր խմբագրությամբ հաստատման ենթակա կանոնադրության նախագիծը (հավելված 7),
8) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետերերի ընդհանուր ժողովի կանոնակարգի նախագիծը (հավելված 8),
9) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի մասին կանոնակարգի նախագիծը (հավելված 9),
10) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի վերստուգող հանձնաժողովի մասին կանոնակարգի նախագիծը (հավելված 10),
11) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետերերի ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին կանոնակարգի նախագիծը (հավելված 11),
12) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի շահութաբաժնային քաղաքականության մասին կանոնակարգի նախագիծը (հավելված 12):

Սույն կետով նախատեսված փաստաթղթերը բաժնետերերին բացահայտել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի ինտերնետային կայքում տեղադրելու և 27.03.2010թ.-27.04.2010թ. ժամանակահատվածում Ընկերության գործունեության վայրում (ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 10 հասցեում) դրանց ծանոթանալու հնարավորություն տալու կամ գրավոր պահանջով փաստաթղթերի պատճենները տրամադրելու միջոցով:

7. Հաստատել քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը՝ համաձայն հավելված 13-ի:

8. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը լրացված քվեաթերթիկները կարող են ուղարկել (ներկայացնել) Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Ա. Մկրտչյան 6 հասցեով՝ մինչև 2010 թվականի ապրիլի 27-ը, ժամը 16:00-ն:

9. Հաշվի առնելով այն փաստը, որ 2010 թվականի ապրիլի 27-ին, ժամը 11:00-ին գումարվող «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովում առաջին անգամ ձևավորվելու է Հաշվիչ հանձնաժողով, և այն, որ համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքի 84 հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետի՝ Տնօրենների Խորհրդին իրավասություն է տրված լուծելու բոլոր այն հարցերը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ, մինչև Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի կողմից Հաշվիչ հանձնաժողովի կազմ ընտրելը՝ ժողովի քվորման որոշումը, բաժնետերերին և նրանց ներկայացուցիչներին ժողովում օրակարգի հարցերի քվեարկման կարգի վերաբերյալ բացատրություններ տալը, քվեարկության սահմանված կարգը և բաժնետերերի՝ քվեարկությանը մասնակցելու իրավունքն ապահովելը, ձայների հաշվարկի իրականացնումը, Հաշվիչ հանձնաժողովի կազմ ընտրելու հարցի վերաբերյալ քվեարկության արդյունքների ամփոփումը հանձնարարել Ժան Հովհաննիսյանին:

10. Հանձնարարել Ընկերության գլխավոր տնօրենին ապահովել սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների իրականացումը:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2010թ. մարտի 11-ից:

Խորհրդի նախագահ՝ **<u>ստորագրություն</u>** **Վ. Բեգլարյան**